ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

/Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն/

2010 թվականի հունիսի 7-ին պատվիրատու ՀՀ մշակույթի նախարարություն, որը գտնվում է ք.Երևան, Կառավարական շենք N 3 հասցեում և կատարող՝ «Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ-ն, որը գտնվում է ք.Երևան, Արամի 1 հասցեում, միջև կնքվել է հրատարակման աշխատանքները մեկ անձից գնելու պայմանագիր /այսուհետև՝ պայմանագիր/:

Գնման առարկա է հանդիսանում հրատարակման աշխատանքների կատարումը:

Պայմանագրի գինը կազմում է 3 000 000 ՀՀ դրամ:

Գնումները կատարվում են հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեկ անձից գնումներ կատարելու ձևով:

ՀՀ .մշակույթի նախարարության
աշխատակազմի ղեկավար ..... Ս.Ավետիսյան

Կ.Տ.

Հաստատում եմ
ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի
ղեկավար Ս. Ավետիսյան
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«« 8 »» 06 2010թ.

Կ.Տ.

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն ք. Երևան Կառավարական 3 տուն

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☐ աշխատանք ☑ ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ☑ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը Գրականության հրատարակում

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի
Անվանումը (անունը, ազգանունը) «Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ

Հասցեն ք. Երևան, Արամի 1

1.6. Կնքված գնման պայմանագրի

Ծածկագիրը ՀՀ ՄՆ ՀԱԳ N 12

Կնքման ամսաթիվը 07.06.2010 թ.

-

Գործողության ժամկետը 07.06.2010 թ.-30.04.2011 թ.

Գինը 3000000 /երեք միլիոն / ՀՀ դրամ

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը ՀՀ 2010 թվականի պետական բյուջե

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

☐

Այո [√] Ոչ

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը ՀՀ կառավարության 24.12.2009 թ. N 1522-Ն որոշում

Օրը՝ ամսաթիվը 27.01.2010 թ.
08 բաժին, 03 խումբ 02 դաս «02. Գրականության հրատարակում» ծրագիր

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում [√] Տեխնիկական հսկողության հանձնաժողով [ ]

Անվանումը Պատասխանատու ստորաբաժանում
Իրավասությունը վերապահելու հիմքը 15.03.10 թ. N 04 - Ա.
Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի հրատարակչական գործի գործակալության պետ է. Միլիտոնյան

2.8 Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

[v]

գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

[ ]

արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

[ ]

պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4 Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը
Գնման ենթակա աշխատանքը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից ինչը պայմանավորված է հեղինակային և հարակից իրավունքներով /Պատվիրատուի մոտ առկա է հեղինակային իրավունքը հավաստող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը/

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներակայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում [√]

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը կցվում է
1	2	3	4
1	«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ	ք. Երևան, Արամի 1	N 02/12.2/1504-10, 31.05.10 թ.

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը
1	2	3	4
1	«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ	ք. Երևան, Արամի 1	N 02/06, 02.06.10 թ.

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Մերժման հիմքը	Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը
1	2	3

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Մերժման հիմքը	Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը
1	2	3

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Մերժման հիմքը	Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը
1	2	3

3.5. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Պատվիրատուին ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը _____
Պաշտոնը _____

Մասնակցին ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը _____
Պաշտոնը _____

Բանակցությունների արդյունքների համառոտ նկարագիրը _____
_____

4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիարատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Կացեման հիմքը՝ պատճառը _____
Կասեցման ժամկետը _____

5. Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Բողոքը ներկայցրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Բողոքի համառոտ նկարագիրը	Բողոքը ներկայացնելու ամսաթիվը
1	2	3

Ընդունե՞լ է պատվիրատուն որոշում բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Որոշման համառոտ բովանդակությունը	Նման որոշում կայացնելու իրավասության հիմքը	Բողոքը ներկայացրած անձին որոշումը տրամադրելու ամսաթիվը
1	2	3

Եթե ոչ, ապա նշել՝

Որոշում չկայացնելու պատճառը	Բողոքը ներկայացրած անձին ծանուցելու ամսաթիվը
1	2

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Բողոքը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը)	Բողոքի համառոտ նկարագիրը	Բողոքի մասին պատվիրատուին ծանուցելու ամսաթիվը
1	2	3

Ընդունե՞լ է լիազոր մարմինը որոշում ներկայացված բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Որոշման համառոտ բովանդակությունը	Լիազոր մարմնի որոշումը ստանալու ամսաթիվը
1	2

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը Է. Միլիտոնյան

Պաշտոնը ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի հրատարակչական գործի գործակալության պետ

Հեռախոսը /աշխ/ 52-86-10

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը _____

02/12.2/1504-10
31.05.10թ.

«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ
հրատարակչություն» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Ս. ԽԱՉԻԿՈՂԼՅԱՆԻՆ

Հայտնում ենք, որ «ՀՀ 2010 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Գրականության հրատարակում» ծրագրով նախատեսված են գրականության հրատարակման աշխատանքներ:

Առաջարկում ենք Ձեզ կատարել հրատարակման աշխատանք:

Գնումները ֆինանսավորվելու են «ՀՀ 2010 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների հաշվին: Գնման ընդհանուր գինը չի կարող վերանայվել և գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ-ն՝

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում, կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝
- դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված է կամ մարված,
- գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ձեր կողմից ներկայացվող հայտը պետք է ներառի նաև Ձեր կողմից հաստատված և ստորագրված պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը, իսկ շահույթը չի կարող գերազանցել պայմանագրի գնի տասը տոկոսը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը, գնային առաջարկը և պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ հրատարակման աշխատանքների գնման պայմանագրի նախագիծը:

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ.՝ Լ. Հակոբյան
Հեռ.՝ 528610

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ՄՆ ՀԱԳ N 12

ք. Երևան 07»06 2010թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Ավետիսյանի մի կողմից և «Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ս. Խաչիկոզլյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետում և վճարի դիմաց իրականացնել գրականության հրատարակման և Պատվիրատուին հանձման աշխատանքները (այսուհետ՝ «Աշխատանք») համաձայն սույն պայմանագրի՝

- Հրատարակվող գրականության ցանկի՝ հավելված N 1
- Աշխատանքի տեխնիկական բնութագրի՝ հավելված N 2
- Աշխատանքի գնման ժամանակացույցի՝ հավելված N 3
- Աշխատանքի վճարման ժամանակացույցի՝ հավելված N 4
- Աշխատանքի փուլի հանձնման-ընդունման ակտի ձևի՝ հավելված N 5
- Աշխատանքի հանձնման-ընդունման ակտի ձևի՝ հավելված N 6

2. Աշխատանքի կատարման դիմաց վճարումը իրականացվում է «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածի 08 բաժնի 03 խմբի 02 դասի «02.Գրականության հրատարակում» ծրագրով և ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 18-ի «Գրականության հրատարակում», «Ոչ պետական մամուլի հրատարակում», «Աջակցություն գրականության հրատարակմանը» և «Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում» ծրագրերով 2010 թվականին նախատեսված հատկացումների բաշխման մասին» N 262-Ն որոշման N 1 հավելվածով նախատեսված հատկացումների հաշվին:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Պատվիրատուն պարտավոր է՝

ա) Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման պայմանով, սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և լրիվ ծավալով կատարել սույն պայմանագրի III. մասում նշված վճարումները.

բ) ընդունել Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված Աշխատանքը և դրա միջանկյալ փուլը.

գ) ստորագրել սույն պայմանագրի թիվ *15* կետում նշված ակտը՝ Կատարողի կողմից Աշխատանքի սույն պայմանագրի N 3 հավելվածում նշված փուլը պատշաճ ձևով ու կարգով կատարելու դեպքում.

դ) ստորագրել սույն պայմանագրի թիվ *18* կետում նշված ակտը՝ Կատարողի կողմից Աշխատանքն ամբողջ ծավալով և պատշաճ կատարելու դեպքում.

զ) աջակցել Կատարողին գրահրատարակության ոլորտի Պատվիրատուի իրավասությանը վերապահված իրավասությունների և դրանց հետ կապված մասնագիտական հարցերի շրջանակներում:

4. Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը՝ բացառելով անմիջական միջամտություն վերջինիս կանոնադրական գործունեությանը.

բ) Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին.

գ) Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերացնել Աշխատանքի կամ դրա որևէ մասի կատարման ընթացքում (արդյունքում) տեղ գտած թերությունները, կամ պատվիրատուի ընդունմանը վերստին ներկայացնել անպատշաճ ձևով կամ կարգով ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա փուլը.

դ) չընդունել Կատարողի կողմից ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա փուլի արդյունքը՝ ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտերի, կամ սույն պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, հետաձգելով սույն պայմանագրի N 4 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» սահմանված վճարման ժամկետը մինչև Աշխատանքը կամ դրա համապատասխան միջանկյալ փուլի արդյունքի ընդունելը.

ե) իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կամ փուլի թերությունների անվճար վերացման և այն Պատվիրատուի ընդունմանը վերստին ներկայացման ողջամիտ ժամկետ, կամ նոր ժամկետ՝ Կատարողից պահանջելով վճարել սույն պայմանագրի թիվ *11* կետով սահմանված տույժերը.

զ) իր հայեցողությամբ սահմանել սույն պայմանագրով սահմանված ժակետում ընդունմանը չներկայացված Աշխատանքի կամ միջանկյալ փուլն ընդունմանը ներկայացնելու նոր (ողջամիտ) ժամկետ, Կատարողից պահանջելով վճարել սույն պայմանագրի թիվ *11* կետով սահմանված տույժերը.

է) սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, Կատարողից պահանջելով Պատվիրատուին հանձնել Աշխատանքի փաստացի կատարված մասը (ներառյալ արդեն ընդունվածը, ընդունմանը չներկայացվածը և չընդունվածը) և վճարել սույն պայմանագրի թիվ *24* կետով սահմանված հատուցումը և (կամ) սույն պայմանագրի թիվ *11* կետով սահմանված տույժերը և (կամ) սույն պայմանագրի թիվ *23* կետով սահմանված տուգանքը:

5. Կատարողը պարտավոր է՝

ա) պայմանագիրը կնքելու պահից սկսել սույն պայմանագրի կատարմանն ուղղված աշխատանքները.

բ) Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի կողմից տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին, կամ ՀՀ օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին.

գ) Աշխատանքը և դրա միջանկյալ փուլը Պատվիրատուի ընդունմանը ներկայացնել սույն պայմանագրով սահմանված կարգով և սույն պայմանագրի N 3 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում, այդ մասին Պատվիրատուին տեղեկացնելով սույն պայմանագրում նշված, կամ Պատվիրատուի կողմից սահմանված ընդունման այլ ժամկետներից առնվազն 5 աշխատանքային օր առաջ.

դ) Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները դրանք շուտափույթ վերացնելու համար

ե) հրատարակվող գրքերի անոտացիաների վերևի մասում նշել՝ «Հրատարակված է պետական պատվերով»

զ) հրատարակվող գրքերը տպագրության հանձնելուց առաջ Պատվիրատուի հաստատմանը ներկայացել դրանց մակետները

է) հրատարակվող գրքերի վերջին՝ ֆիրմային էջերում նշել հրատարակության ելից տվյալները (գրքի չափը, ծավալը, տպաքանակը, ինչպես նաև ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով տվյալները՝ գրքի հեղինակի, վերնագրի, Կատարողի և տպարանի մասին):

6. Կատարողն իրավունք ունի՝

ա) Պատվիրատուից պահանջել վճարել սույն պայմանագրով սահմանված տույժերը, վերջինիս կողմից սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետների խախտման դեպքում,

բ) սույն պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը, Պատվիրատուին հանձնելով Աշխատանքի փաստացի կատարված (ներառյալ արդեն ընդունված, ընդունմանը չներկայացված և չընդունված) մասը, և պահանջելով վճարել սույն պայմանագրի թիվ *24* կետով սահմանված հատուցումը և (կամ) սույն պայմանագրի թիվ *10* կետով սահմանված տույժերը:

III. ՓՈԽՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳ

7. Սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ընդհանուր արժեքը կազմում է 3000,0 հազ. (երեք միլիոն) ՀՀ դրամ:

8. Աշխատանքի փուլի արժեքը ու դրա վճարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի N 4 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով»: Սույն կետում սահմանված գումարը Կատարողի բանկային հաշվին է փոխանցվում՝ փուլի հանձնման-ընդունման ակտը երկկողմ ստորագրելու պահից 15 (տասնհինգ) բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 2010 թվականի դեկտեմբերի 25-ը: Աշխատանքը սկսելու պահից Պատվիրատուն Կատարողին է վճարում կանխավճար՝ Աշխատանքի արժեքի 70%-ի՝ այսինքն 2100.0 հազար (երկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամի չափով գումար՝ ըստ վճարման ժամանակացույցի /45 % -ը մինչև հունիսի 30 -ը, իսկ 25 % -ը մինչև սեպտեմբերի 30 -ը/, որի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ /պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում

նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Աշխատանքը կատարվում է 2 /երկու / տոկոս շահույթով:

9. Սույն պայմանագրի թիվ *7* կետում նշված գումարն իր մեջ է ներառում ավելացված արժեքի հարկի գումարը, ինչպես նաև սույն պայմանագրի կատարման հետևանքով Կատարողի կողմից վճարման ենթակա բոլոր տեսակի այլ հարկերի ու պարտադիր վճարների գումարները, որոնք Կատարողը, հանդիսանալով հարկային գործակալ, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել ՀՀ պետական բյուջե և այլն:

10. Պատվիրատուի կողմից վճարումների սույն պայմանագրով սահմանված ժամկետներն ուշացնելու դեպքում նա Կատարողին է վճարելու նաև տույժ՝ վճարման ենթակա, բայց չվճարված գումարի 0,05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, վճարման ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

11. Կատարողի կողմից Պատվիրատուի ընդունմանը ներկայացված Աշխատանքը (կամ դրա փուլը) սույն պայմանագրի N 3 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներից ուշ ներկայացնելու կամ դրանք Պատվիրատուի կողմից չընդունելու դեպքում, Կատարողը Պատվիրատուին վճարելու է տույժ՝ չկատարված Աշխատանքի (կամ տվյալ փուլերի) արժեքի 0,05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ Աշխատանքի (կամ այդ փուլերի) ընդունման ժամկետանց յուրաքանչյուր օրացուցային օրվա համար: Կատարողի կողմից վճարման ենթակա սույն պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքը հաշվարկվում և առաջնահերթության կարգով հաշվանցվում են Պատվիրատուի կողմից Կատարողին փոխանցվող հերթական վճարների գումարների մեջ, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ ձևակերպվում են որպես բռնագանձման պահանջ:

12. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

IV. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

13. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2011 թ. ապրիլի 30-ը ներառյալ, սակայն ամեն դեպքում ոչ պակաս, քան երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

14. Սույն պայմանագրի ժամկետը կարող է փոփոխվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Աշխատանքի փուլը Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 3 հավելված՝ «Աշխատանքի գնման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին դրանից ոչ պակաս, քան 5 աշխատանքային օր առաջ ուղարկելով հրատարակման ենթակա գրքերի մակետները և Աշխատանքի փուլի հանձնման-ընդունման ակտի լրացված, ստորագրված ու կնքված հինգ օրինակներ, որոնց ձևը բերված է սույն պայմանագրի N 5 հավելվածում: Ընդունմանը ներկայացվող Աշխատանքները համատեղ զննվում են Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և դրանք ընդունելու դեպքում Պատվիրատուն զննության ավարտի պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է փոխանցում ակտի մեկ օրինակը:

16. Պատվիրատուի ընդունմանը առաջին անգամ ներկայացված Աշխատանքի փուլը վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքի փուլը չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու փուլն ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետը,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը՝ եթե առկա են սույն պայմանագրի թիվ *21.* կետում նշված հիմքերը:

17. Պատվիրատուի ընդունմանը երկրորդ անգամ ներկայացված Աշխատանքի փուլը վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքի փուլն չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու փուլն ընդունմանը վերստին ներկայացնելու նոր ժամկետ,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը:

18. Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի IV մասով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված գրքերի

օրինակները և Աշխատանքի հանձնման-ընդունման ակտի լրացված, ստորագրված ու կնքված հինգ օրինակներ, որոնց ձևը բերված է սույն պայմանագրի N 6 հավելվածում: Ընդունմանը ներկայացվող Աշխատանքը համատեղ զննվում է Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և այն ընդունելու դեպքում Կատարողը իր միջոցներով Աշխատանքը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղափոխում և հանձնման-ընդունման ակտով փոխանցում է «Գիրք» հիմնադրամին: Աշխատանքը «Գիրք» հիմնադրամին փոխանցելու հանձնման-ընդունման ակտի օրինակը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը:

19. Պատվիրատուի ընդունմանը առաջին անգամ ներկայացված Աշխատանքն ամբողջությամբ վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքն ամբողջությամբ չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և՝

ա) կամ դրանք վերացնելու ու Աշխատանքն անբողջությամբ ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետ,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը՝ եթե առկա են սույն պայմանագրի թիվ *21.* կետում նշված հիմքերը:

20. Պատվիրատուի ընդունմանը երկրորդ անգամ ներկայացված Աշխատանքն ամբողջությամբ վերջինիս կողմից չընդունելու դեպքում, նա զննության ավարտի պահից տաս աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում Աշխատանքն ամբողջությամբ չընդունելու հիմնավորված գրավոր մերժում, նշելով թերությունները և

ա) կամ դրանք վերացնելու ու Աշխատանքն անբողջությամբ ընդունմանը վերստին ներկայացնելու նոր ժամկետը,

բ) կամ սույն պայմանագիրը միակողմանի կարգով վաղաժամկետ լուծելու մասին իր որոշումը:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

21. Բացի սույն պայմանագրով սահմանված այլ դեպքերից, սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պատվիրատուի նախաձեռնությամբ նաև եթե՝

ա) սույն պայմանագրով նախատեսված հիմքերով Պատվիրատուն երկու անգամ մերժել է Աշխատանքի կամ դրա փուլի ընդունումը.

բ) Պատվիրատուի ընդունմանը ներկայացված Աշխատանքը կամ դրա փուլը կատարված է սույն պայմանագրի պահանջների բազմաթիվ կամ կոպիտ (էական) եզակի խախտմամբ.

գ) Կատարողը ավելի քան 10 աշխատանքային օրով ուշացրել է սույն պայմանագրի թիվ *4* կետի գ) ենթակետում նշված պահանջների կատարումը.

դ) Կատարողը սույն պայմանգիրը կնքելու համար ներկայացրել է ակնհայտ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկություններ (տեղեկատվություն).

ե) Կատարողը չի կատարել Պատվիրատուի ներկայացուցչի օրինական որևէ ցուցում.

զ) ստուգման արդյունքում պարզվել է, որ Աշխատանքի կատարման ընթացքում Կատարողը թույլ է տվել սույն պայմանագրի պահանջների բազմաթիվ կամ կոպիտ (էական) եզակի խախտում:

22. Բացի սույն պայմանագրով սահմանված այլ դեպքերից, սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կատարողի նախաձեռնությամբ նաև եթե՝

ա) Պատվիրատուն երկու անգամ ակնհայտորեն անհիմն մերժել է Աշխատանքի փուլի ընդունումը, սահմանելով դրանք ընդունմանը վերստին ներկայացնելու ժամկետներ.

բ) Պատվիրատուն ավելի քան 10 բանկային օրով խախտել է սույն պայմանագրով սահմանված վճարումների կատարման որևէ ժամկետ.

գ) Պատվիրատուի մեղքով ավելի քան 10 աշխատանքային օրով ուշացվել է Աշխատանքի կամ դրա փուլի ընդունման համար, կամ դրանք չընդունելու մասին Կատարողին տեղեկացնելու մասին սույն պայմանագրով սահմանված որևէ ժամկետ:

23. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերից գանձվում է սույն պայմանագրի թիվ *24* կետում նշված հատուցումները և տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

VII. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

24. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք անպատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու, կամ կատարելուց

խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով, կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչնդոտներ ստեղծելու, մյուս Կողմին վնաս պատճառելու կամ հավանական եկամուտներից զրկելու համար Կողմերից յուրաքանչյուրը կրում է նյութական և ֆինանսական պատասխանատվություն (հատուցման պարտավորություն)՝ պատճառված վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով:

25. Սույն պայմանագրի *24* կետով նախատեսված դեպքերում հարգելի պատճառ (մեղքի բացակայություն) է համարվում անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքը, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են համարվում՝ տարերային աղետների, արդյունաբերական և այլ վթարների, զանգվածային հասարակական անկարգությունների, պատերազմի կամ այլ նման պարագաների հետևանքներն ու դրանց վերացնելու դեպքերը, կամ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ընդունված և ուժի մեջ մտած ակտերը, եթե դրանք անմիջական կապված են սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների կատարման պատշաճության, ժամկետների կամ ծավալների հետ:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է անընդմեջ 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի սույն պայմանագրով սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին՝ այդ հիմքով որևէ տույժ, տուգանք, կամ հատուցում չհաշվարկելով ու դրանց վճարման պահանջ չներկայացնելով:

26. Սույն պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

27. Սույն պայմանագրում երկու Կողմերի գրավոր համաձայնությամբ կարող են կատարվել ՀՀ օրենսդրության և իրավական այլ ակտերի պահանջներին չհակասող փոփոխություններ և լրացումներ:

28. Սույն պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելը կամ վաղաժամկետ լուծելը, Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում, կամ այլ պատճառաբանությամբ, չի թույլատրվում: Այդպիսի պարագայում մյուս Կողմն իրավունք ունի՝ կամ ստանալ սույն պայմանագրի *24* կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարում երկու դեպքում էլ կիրառելով սույն պայմանագրով սահմանված տույժերն ու տուգանքները:

29. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/ կամ Կատարողին հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա հիմքերը ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանան սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

30. Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

31. սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա/ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ/ եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

32. Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և Կատարողը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

33. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը և Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Սույն պայմանագրի կատարման հետ կապված բոլոր տեսակի փաստաթղթերը, ծանուցումները, տեղեկատվությունը և հաղորդագրությունները Կողմերին պետք է հանձնվեն առ ձեռն, կամ ուղարկվեն պատվիրված նամակներով՝ փոստային հետ ծանուցումով, սույն պայմանագրում նշված հասցեներով: Ծանուցումների, նամակների և այլ փաստաթղթերի ներկայացման (ուղարկման, հանձնման) սույն պայմանագրով սահմանված ժամկետներ են համարվում հասցեատիրոջ կողմից դրանք փաստացի ստանալու (առ ձեռն հանձնելու) պահը, իսկ հասցեատիրոջ բացակայության, կամ նրանից կախված որևէ այլ պատճառով փոստային ծառայության կողմից դրանք հետ վերադարձնելու դեպքում՝ նամակը (առաքանին) վերադարձնելու մասին կապի բաժանմունքի կողմից կատարված նշման օրը:

35. Տեղեկություններ Կողմերի մասին՝

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, հասցեն՝ 0010, քաղաք Երևան, Կառավարական շենք N 3, հաշիվ N 900011031565 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում, հեռ.՝ 52-93-49:

Կատարող՝ «Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ, ք. Երևան, Արամի փ. 1, Հայէկոնոմբանկ, հ/հ 163008101046, ՀՎՀՀ 02538518, հեռ. 56-36-61, 58-27-03:

Սույն պայմանագիրը կազմված է հինգ հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղկացած է վեց թերթից և յոթ թերթ հավելվածներից), որոնցից երկու օրինակները հանձնվում են Կատարողին, իսկ երեք օրինակները՝ Պատվիրատուին:

Պատվիրատու

Ս. Ավետիսյան

Կատարող

Ս. Խաչիկոզլյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ

ԳՆՄԱՆ «07» 06 2010թ.

N ՀՀ ՄՇ ՀԱԳ 12 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

N/N	Հեղինակը	Գրքի անվանումը	Ծավալը /տ/մ/	Տպաքանակը /օրինակ/	Տպագրվող մեկ օրինակի գինը /դրամ/	Գումար /հազ. դրամ/
	Գիտական գրականություն					
1	Գևորգյան Թելման	«Համամասնությունները հայ ճարտարապետության մեջ» /մենագրություն/	20.0	400	3250	1300.0
	Թարգմանական գրականություն					
	Այլ լեզուներից հայերեն					
2	Պլատոն	Երկեր 4 հատորով, հ. 3	17.5	400	4250	1700.0
	ԸՆԴԱՄԵՆԸ					3000.0

ԿԱՏԱՐՈՂ՝

«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատ.» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Խաչիկօղլյան

Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար

Մ. Ավետիսյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

Է. Սիլիտոնյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ

ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ «07» 06 2010 թ.

N ՀՀ ՄՆ ՀԱԳ 12 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աշխատանքի անվանումը՝ **Գևորգյան Թելման, «Համամասնությունները հայ ճարտարապետության մեջ»** /մենագրություն/ գրքի հրատարակում

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Գիրքն ամփոփում է ճարտարապետ, վերականգնող, տեսաբան Թելման Գևորգյանի գիտական աշխատությունները՝ նվիրված ճարտարապետության կարևորագույն խնդիրներից մեկին: Լույս է տեսնում «'Իմացություն' գրադարան» մատենաշարով:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	Համակարգչային շարվածքի, էջադրման և ձևավորման աշխատանքների տեխնիկական պահանջները՝ ըստ ներկայացված գրքի նմուշների: Չափը՝ 84x108/32, ծավալը՝ 20 տպագր. մամուլ (այդ տվում սև-սպիտակ և գունավոր ներդիրներ), տպաքանակ՝ 400 օրինակ: Շարվածքը համակարգչային՝ PageMaker 7 ծրագրով: Տառատեսակը՝ Grqi Nor: Թուղթը՝ 80 գ. /քմ.: Կազմ նո. 7, սուպերշապիկ՝ 4 գույն, կավճապատ, լամինացված: Տիրաժի տպագրությունը՝ օֆսեթ:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ՕՇ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍ 311-09 չափանիշներին
4	Աշխատանքի քանակական ցուցանիշները	Մեկ օրինակի ծավալը՝ 20 տպագրական մամուլ Գրքի տպաքանակը՝ 400 օրինակ
5	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության ազդօրինակը՝ 20 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Կատարող՝
«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատ.» ՍՊԸ

Տնօրեն Ս. Խաչիկօղլյան

Կ.Տ.

Պատվիրատու՝
ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի

Ս. Ավետիսյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

Է. Միլիտոնյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ

ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ «07» 06 2010 թ.

N ՀՀ ՄՆ ՀԱԳ 12 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աշխատանքի անվանումը՝ **Պլատոն, Երկեր 4 հատորով, հ. 3-ի հրատարակում**

NN	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Հույն փիլիսոփա Պլատոնի Երկերի քառահատոր ժողովածուի երրորդ հատորն ընդգրկում է "Տիմեոս" և "Ֆիլեբոս" տրամախոսությունները: Լույս է տեսնում «'Իմացություն' գրադարան» մատենաշարով:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	Համակարգչային շարվածքի, էջադրման և ձևավորման աշխատանքների տեխնիկական պահանջները՝ ըստ ներկայացված գրքի նմուշների: Չափսը՝ 84x108/32, ծավալը՝ 17,5 տպագր. մամուլ, տպաքանակ՝ 400 օրինակ: Շարվածքը համակարգչային՝ PageMaker 7 ծրագրով: Տառատեսակը՝ Nork New: Թուղթը՝ 80 գ. /քմ.: Կազմ նո. 7: Տիրաժի տպագրությունը՝ օֆսեթ:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի OCT 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին
4	Աշխատանքի քանակական ցուցանիշները	Մեկ օրինակի ծավալը՝ 17,5 տպագրական մամուլ Գրքի տպաքանակը՝ 400 օրինակ
5	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության ազդօրինակը՝ 17,5 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Կատարող՝
«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատ.» ՍՊԸ

տնօրեն Ս. Խաչիկօղլյան

Կ.Տ.

Պատվիրատու՝
ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի

Ս. Ավետիսյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Է. Միլիտոնյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ
ԱՆՃԻՑ ԳՆՄԱՆ «05 06 2010 թ.
N ՀՀ ՄՆ ՀԱԳ 12 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ մշակույթի նախարարության
աշխատակազմի ղեկավար՝
Ս. Ավետիսյան

Աշխատանքի գնման ժամանակացույց

h/h	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	Աշխատանքի փուլի /մակետի/ և ամբողջական կատարման (օրինակների ընդունման) ժամկետները		Ընդամենը
		Աշխատանքի փուլը՝ 2010 թ. նոյեմբերի_«_25_»-ին	Աշխատանքն ամբողջությամբ՝ 2011թ. ապրիլի 30-ին	
1	Գևորգյան Թելման, «Համամասնությունները հայ ճարտարապետության մեջ» /մենագրություն/	1 մակետ	400 օրինակ	400 օրինակ
2	Պլատոն, Երկեր 4 հատորով, հ. 3	1 մակետ	400 օրինակ	400 օրինակ

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝_____ Է. Միլիտոնյան____

Կատարող՝«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵՆԳԻՄ հրատ.» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Խաչիկօղլյան

կնք.

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
ՀՐԱՄԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ
ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ «07 06 .2010 թ.
N ՀՀ ՄՇ ՀԱԳ 12 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ մշակույթի նախարարության
աշխատակազմի ղեկավար՝
Ս. Ավետիսյան

Վճարման ժամանակացույց

ՀՀ մշակույթի նախարարության

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 08 բաժնի 03 խմբի 02 դասի «02. Գրականության հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին:

Ծրագիրն իրականացնողը՝ ՀՀ մշակույթի նախարարություն

h/h	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	Գնումն իրականավնելու նպատակով նախատեսվում է վճարել /հազ. դրամ/				Ընդամենը /հազ. դրամ/
		2010 թ. առաջին եռամսյակ	2010 թ. առաջին կիսամյակ	2010 թ. ինն ամիս	2010 թ. տարի	
1	Գևորգյան Թելման, «Համամասնությունները հայ ճարտարապետության մեջ» /մենագրություն/	--	585.0	910.0	1300.0	1300.0
2	Պլատոն, Երկեր 4 հատորով, հ. 3	--	765.0	1190.0	1700.0	1700.0
	Ընդամենը	--	1350.0	2100.0	3000.0	3000.0

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝_____ Է. Միլիտոնյան

Կատարող՝«Սարգիս Խաչենց ԱՅԲԲԵԼԳԻՄ հրատ.» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Խաչիկօղլյան

կտ

ՀԱՎԵԼՎԱԾ N 5

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ

ԳՆՄԱՆ « » « » 2010 թ.

N ՀՀ ՄՆ ՀԱԳ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Կատարող	Պատվիրատու ՀՀ մշակույթի նախարարություն
«Սարգիս Խաչենց ԱՅԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ	
հասցե ~~ք. Երևան, Արամի փ.1~~	հասցե ~~Կառավարության տուն 3~~
հհ Հայէկոնոմ բանկ, 163008101046	հհ 900011031565
հվհհ 02538518	հվհհ 02508054

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՓՈՒԼԻ ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _» «_____» 2010_թ.

Պայմանագրի անվանումը _____Հրատարակման աշխատանքները մեկ անձից գնելու _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը « »_« _» 2010 _թ. Պայմանագրի համարը _

Պատվիրատուն՝ ի դեմս_ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ավետիսյանի և Կատարողը՝ ի դեմս «Սարգիս Խաչենց ԱՅԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ տնօրեն Ս. Խաչիկօղլյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ«__» «__» 2010_թ կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) թիվ_ եզրակացությունը այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը « »_« _» 2010 թ-ից «25_»«_11» 2010 թ ընկած ժամանակահատվածում իրականացնելու է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանք-ների համառոտ նկարա-գիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
	/ ստորագրություն /
ազգանուն Ս. Խաչիկօղլյան	ազգանուն _____ Ս. Ավետիսյան
Կ. Տ	Կ. Տ

ՀԱՎԵԼՎԱԾ N 6

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ

ԳՆՄԱՆ « » « » 2010 թ.

N ՀՀ ՄՆ ՀԱԳ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Կատարող	Պատվիրատու ՀՀ մշակույթի նախարարություն
«Սարգիս Խաչենց ԱՅԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ	
հասցե ~~ք. Երևան, Արամի փ.1~~	հասցե ~~Կառավարության տուն 3~~
հհ Հայէկոնոմ բանկ, 163008101046	հհ 900011031565
հվհհ 02538518	հվհհ 02508054

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _» «_____» 2011_թ.

Պայմանագրի անվանումը _____ Հրատարակման աշխատանքները մեկ անձից գնելու _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը « »_« _» 2010 _թ. Պայմանագրի համարը _

Պատվիրատուն՝ ի դեմս_ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ավետիսյանի և Կատարողը՝ ի դեմս «Սարգիս Խաչենց ԱՅԲԵՆԳԻՄ հրատարակչություն» ՍՊԸ տնօրեն Ս. Խաչիկօղլյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ«__» «__» 2011_թ կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) թիվ_ եզրակացությունը այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը « »_« _» 2010 թ-ից «30_»«_04 » 2011 թ ընկած ժամանակահատվածում իրականացնելու է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանք-ների համառոտ նկարա-գիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ - ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
	/ ստորագրություն /
ազգանուն Ս. Խաչիկօղլյան	ազգանուն _____ Ս. Ավետիսյան
Կ. Տ	Կ. Տ

«Գիրք» հիմանադրամի տնօրեն
ազգանուն___ Ա. Ադամյան
Կ. Տ